## *1.3. Գներ և սակագներ*

### Գների փոփոխություններն ըստ հանրապետության տնտեսության առանձին հատվածների 2004թ. հունվար-հուլիսին

*(նախորդ ամսվա նկատմամբ, %)*

| | Սպառողական գների ինդեքս [1)] | Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքս [2)] | Գների ինդեքսը շինարարությունում [3)] | Բեռնափոխադրումների սակագների ինդեքս [4)] | Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքս [5)] | Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքս [6)] |
|---|---|---|---|---|---|---|
| Հունվար | 102.5 | 99.5 | 100.3 | 99.8✧ | 98.5 | 101.0 |
| Փետրվար | 99.4 | 108.6 | 97.9 | 100.4✧ | 101.0 | 99.5 |
| Մարտ | 100.3 | 101.9 | 102.4 | 107.7✧ | 97.2 | 101.1 |
| Ապրիլ | 101.2 | 96.1 | 99.8 | 99.7✧ | 99.8 | 99.5 |
| Մայիս | 101.1 | 102.1 | 99.9 | 98.7✧ | 99.6 | 102.2 |
| Հունիս | 99.9 | 103.8 | 99.96 | 99.5✧ | 88.5 | 100.9 |
| Հուլիս | 97.5 | 96.7 | 99.0 | 97.3 | 90.6 | 103.3 |
| Հուլիսը 2003թ. դեկտեմբերի նկատմամբ | 101.9 | 108.5 | 99.3 | 102.7 | 96.6*) | 107.6*) |
| 2004թ. հունվար հուլիսը 2003թ. հունվար-հուլիսի նկատմամբ | 107.9 | 121.5 | 102.4 | 100.6 | 108.1 | 106.5 |

*) 2004թ. հուլիսի և 2003թ. դեկտեմբերի ընթացիկ գներով հաշված:

1) Ըստ գործող մեթոդաբանության, ՀՀ-ում գների դիտարկումը կատարվում է նախորդ ամսվա 21-ից հաշվետու ամսվա 20-ն ընկած ժամանակահատվածում Երևան քաղաքում և հանրապետության 9 մարզերում 400 անվանում ապրանք (ծառայություն) - ներկայացուցիչների գծով:

2) Գների դիտարկումը կատարվում է արդյունաբերական ոլորտի 254 բազային կազմակերպություններում` 888 անվանում արտադրանք - ներկայացուցիչների գծով: Գների ինդեքսի հաշվարկը կատարվում է ժողտնտեսության ճյուղերի համամիութենական դասակարգչի (ԺՏՃՀԴ) համաձայն: Տնտեսական գործունեության տեսակների դասակարգչին (ՏԳՏԴ) համապատասխան գների ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը մշակման փուլում է:

3) Ըստ ՀՀ քաղաքաշինության նախարարության տվյալների:

4) Հաշվարկվում է տրանսպորտի 4 տեսակներով (երկաթուղային, ավտոմոբիլային, օդային և խողովակաշարային)` բեռնառաքումների դիտարկված սակագների հիման վրա: Կատարվել է ինդեքսների վերահաշվարկ, կապված բազային ժամանակաշրջանի` 2003թ. տարեկան կշիռների, ինչպես նաև խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների ճշգրտման հետ:

5) Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից իրացված 61 անվանում գյուղմթերքի իրացման գների և ծավալների հետազոտման տվյալների:

6) *Ըստ 7600 գյուղացիական և գյուղացիական կոլեկտիվ տնտեսությունների կողմից 92 անվանում արտադրության միջոցների գնման գների և ծավալների հետազոտման տվյալների:*

### Գների, սակագների աճի տեմպերը 2003-2004թթ. հունվար-հուլիսին

*(նախորդ տարվա հունվար-հուլիսի նկատմամբ, %)*



*Սպառողական գներ:* 2004թ. հունիս-հուլիսին հանրապետության սպառողական շուկայում գրանցվել է 2.6% ընդհանուր գնանկում, ընդ որում հուլիսին սպառողական գները նվազել են 2.5%, ինչին հիմնականում նպաստել են պարենային որոշ ապրանքատեսակների գների սեզոնային փոփոխությունները, ինչպես նաև ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի նվազումը:

2004թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում պարենային ապրանքների (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) գնանկումը կազմել է 3.4%, ոչ պարենային ապրանքներինը` 0.7%: Ծառայությունների ոլորտում արձանագրվել է սակագների 0.4% նվազում:

2004թ. հունվար-հուլիսին սպառողական գների միջին ամսական հավելաճը կազմել է 0.3%, ինչը գերազանցել է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշը 0.2 տոկոսային կետով (0.1%):

**Սպառողական գների հավելաճը 1995-2004թթ. հուլիսին**

*(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)*




Սպառողական գների ինդեքսը 2004թ. հուլիսին 2003թ. դեկտեմբերի համեմատ կազմել է 101.9%, ինչը 0.9 տոկոսային կետով բարձր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից (101.0%):

**Սպառողական գների փոփոխությունները 2004թ. հուլիսին**

*(%)*

| | *2004 թվականի* | | | |
|---|---|---|---|---|
| | *հուլիսը* | | հունվար-հուլիսը | հուլիսը 2002թ. նկատմամբ |
| | 2003թ. դեկտեմբերի նկատմամբ | 2003թ. հուլիսի նկատմամբ | 2003թ. հունվար-հուլիսի նկատմամբ | |
| Սպառողական գների ինդեքս | 101.9 | 109.6 | 107.9 | 111.8 |
| այդ թվում` | | | | |
| պարենային ապրանքներ (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) | 102.6 | 113.9 | 111.1 | 116.2 |
| ոչ պարենային ապրանքների | 99.7 | 101.1 | 100.6 | 102.5 |
| ծառայությունների | 101.0 | 101.2 | 101.9 | 103.6 |

### ՀՀ սպառողական շուկայում պարենային, ոչ պարենային ապրանքների գների և ծառայությունների սակագների փոփոխությունները 2004թ. հունվար-հուլիսին

*(նախորդ ամսվա համեմատ, %)*



| | հունվար | փետրըր-վար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս |
|---|---|---|---|---|---|---|---|
| Սպառողական գների ինդեքս | 2,5 | -0,6 | 0,3 | 1,2 | 1,1 | -0,1 | -2,5 |
| Պարենային ապրանքների | 3,6 | -0,8 | 0,3 | 1,6 | 1,7 | -0,3 | -3,4 |
| Ոչ պարենային ապրանքների | 0,2 | 0,0 | 0,0 | -0,1 | 0,2 | 0,1 | -0,7 |
| Ծառայությունների | 0,0 | -0,1 | 0,5 | 1,0 | -0,4 | 0,3 | -0,4 |

*Արտարժութային շուկա:* 2004թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետության թե՛ սպառողական, թե՛ արժութային շուկաներում գրանցվել է գների և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի նվազում, կազմելով համապատասխանաբար 2.5% և 3.2%: Հուլիսին 2003թ. դեկտեմբերի համեմատ արձանագրված սպառողական գների 1.9% հավելաճը ուղեկցվել է հաշվարկային փոխարժեքի 6.9% նվազումով: Նախորդ տարվա նույն ժամանակահատվածում գրանցվել է նմանատիպ միտում և սպառողական գների 1.0% հավելաճի դիմաց գրանցվել է հաշվարկային փոխարժեքի 0.9% նվազում: ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքը 2004թ. հուլիսին կազմել է 526.27 դրամ, ինչը 9.2% ցածր է 2003թ.-ի հուլիսի համապատասխան ցուցանիշից (579.55 դրամ):

### ՀՀ սպառողական գների ինդեքսի և ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային *փոխարժեքի փոփոխությունները 2003-2004թթ. հունվար-հուլիսին*

*(նախորդ տարվա դեկտեմբերի նկատմամբ, %)*



*Պարենային ապրանքների գներ*: 2004թ. հունիս-հուլիսին գրանցվել է պարենային ապրանքների 4.1% ընդհանուր գնանկում, ընդ որում, հուլիսին գնանկումը կազմել է 3.7%, ինչին մեծապես նպաստել է բանջարեղենի և ծխամթերքի գնանկումը:

**Գների փոփոխությունները ըստ պարենային առանձին ապրանքախմբերի**

*(%)*

| | *2004 թվականի* | | | |
|---|---|---|---|---|
| | *հուլիսը* | | հունվար-հուլիսը 2003թ. հունվար-հուլիսի նկատմամբ | հուլիսը 2002թ. նկատմամբ |
| | 2004թ. հունիսի նկատմամբ | 2003թ. դեկտեմբերի նկատմամբ | | |
| *Պարենային ապրանքներ* (ներառյալ ոգելից խմիչք և ծխախոտ) | 96.6 | 102.6 | 111.1 | 116.2 |
| *Պարենային ապրանքներ* | 96.3 | 103.0 | 112.1 | 118.1 |
| հացամթերք | 99.2 | 100.3 | 130.1 | 131.5 |
| մսամթերք | 99.8 | 112.4 | 113.2 | 122.7 |
| ծկնամթերք | 91.7 | 118.1 | 96.7 | 135.5 |
| կաթնամթերք | 98.0 | 105.0 | 106.0 | 103.2 |
| ձու | 98.8 | 84.1 | 115.8 | 109.2 |
| կենդանական և բուսական յուղ | 99.0 | 101.1 | 109.2 | 109.6 |
| միրգ | 100.9 | 143.9 | 104.7 | 164.8 |
| բանջարեղեն և կարտոֆիլ | 73.1 | 82.4 | 92.6 | 85.1 |
| շաքարավազ | 100.1 | 99.6 | 95.8 | 97.9 |
| սուրճ, թեյ, կակաո | 100.0 | 100.8 | 101.9 | 101.6 |
| հրուշակեղեն | 100.0 | 102.3 | 101.7 | 104.0 |
| այլ մթերքներ | 99.6 | 100.1 | 100.4 | 99.4 |
| ոչ ոգելից խմիչք | 101.0 | 105.3 | 104.1 | 109.3 |
| *Ոգելից խմիչք և ծխախոտ* | 100.0 | 98.6 | 102.2 | 100.8 |

Բանջարեղենի և կարտոֆիլի ապրանքախմբում 2004թ. հունիս-հուլիսին գրանցվել է 33.8% գնանկում, ընդ որում, հուլիսին հունիսի համեմատ գնանկումը կազմել է 26.9%: Վերջինս հիմնականում պայմանավորվել է կանաչ լոբու (68.2%), կանաչ պղպեղի (55.6%), սմբուկի (45.7%), լոլիկի (37.1%), կարտոֆիլի (29.7%) գնանկումով: Վարունգի, կաղամբի, գազարի, սխտորի, ճակնդեղի գնանկումը նշված ժամանակահատվածում կազմել է 25.1-5.1%: Հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում արձանագրվել է բանջարեղենի և կարտոֆիլի 37.6-12.9% գնանկում (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Կապանում) : Ք. Երևանում բանջարեղենի և կարտոֆիլի գնանկումը կազմել է 26.5%:

**Բանջարեղենի գների փոփոխությունները 2002-2004թթ.**

*(նախորդ ամսվա նկատմամբ,%)*




| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2002 | 22.7 | -2.3 | -3.2 | 9.8 | 21.1 | -11.4 | -35.6 |
| 2003 | 38.4 | -2.7 | -1.8 | 6.1 | -0.8 | -7.3 | -34.2 |
| 2004 | 23.3 | -4.2 | -4.1 | -1.8 | 11.8 | -9.4 | -26.9 |

2004թ. հուլիսին հունիսի համեմատ մրգի ապրանքախմբում գրանցվել է 0.9% գնաճ, ինչը հիմնականում պայմանավորվել է տանձի (38.4%), խնձորի (29.5%), ելակի (30.1%) գնաճով: Հանրապետության դիտարկված 4 քաղաքներում մրգի գնաճը կազմել է 2.4-18.6% (համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է ք. Եղեգնաձորում), իսկ մյուս 6 քաղաքներում գրանցվել է 21.8-0.4% գնանկում: Մայրաքաղաքում արձանագրվել է մրգի 3.7% գնաճ:

**Մրգի գների փոփոխությունները 2002-2004թթ. հունվար-հուլիսին**

*(նախորդ ամսվա նկատմամբ, %)*



| | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս |
|---|---|---|---|---|---|---|---|
| 2002 | 12.7 | 0.4 | -5.0 | 15.0 | 6.0 | 24.4 | -20.7 |
| 2003 | 29.7 | -14.0 | -5.1 | 17.1 | 22.7 | 5.2 | -28.3 |
| 2004 | 13.7 | -10.0 | 2.1 | 7.7 | 6.2 | 19.3 | 0.9 |

*Ոչ պարենային ապրանքների գներ:* 2004թ. հուլիսին հունիսի համեմատ ոչ պարենային ապրանքների շուկայում գրանցված 0.7% գնանկումը, թերևս, ԱՄՆ դոլարի նկատմամբ հայկական դրամի հաշվարկային փոխարժեքի նվազման արդյունք է:

**Ոչ պարենային ապրանքների հիմնական ապրանքախմբերի գների փոփոխությունները**

*(%)*

| | *2004 թվականի* | | | |
|---|---|---|---|---|
| | *հուլիսը* | | հունվար-հուլիսը 2003թ. հունվար-հուլիսի նկատմամբ | հուլիսը 2002թ. նկատմամբ |
| | 2004թ. հունիսի նկատմամբ | 2003թ. դեկտեմբերի նկատմամբ | | |
| *Ոչ պարենային ապրանքներ* | 99.3 | 99.7 | 100.6 | 102.5 |
| *այդ թվում.* | | | | |
| հագուստ և կտորեղեն | 99.2 | 97.5 | 98.8 | 99.7 |
| վառելիք | 100.0 | 96.3 | 105.7 | 123.9 |
| կահույք | 98.0 | 95.6 | 96.5 | 94.8 |
| գորգեղեն | 99.9 | 99.8 | 99.9 | 103.4 |
| տեքստիլեղեն | 99.6 | 100.5 | 98.6 | 98.3 |
| կենցաղային էլեկտրաապրանքներ | 99.2 | 98.0 | 97.5 | 93.8 |
| խոհանոցային սպասք | 99.5 | 98.3 | 99.7 | 100.4 |
| լվացամիջոցներ | 100.1 | 100.9 | 101.3 | 102.2 |
| շինանյութեր | 99.2 | 98.8 | 99.7 | 97.7 |
| այգեգործական ապրանքներ | 100.2 | 101.8 | 107.5 | 106.6 |
| դեղամիջոցներ | 99.7 | 100.9 | 97.9 | 93.5 |
| անձնական օգտագործման մեքենա-ներ և բենզին | 97.4 | 112.2 | 108.3 | 121.6 |
| մշակույթի ապրանքներ | 98.1 | 95.0 | 96.3 | 92.5 |
| գրենական պիտույքներ | 100.1 | 100.3 | 100.7 | 100.0 |
| գեղահարդարման ապրանքներ | 100.1 | 100.9 | 101.0 | 102.1 |
| ոսկերչական ապրանքներ | 98.2 | 99.9 | 107.3 | 123.0 |
| անձնապիտո ապրանքներ | 99.9 | 99.4 | 98.5 | 99.0 |

2004թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բենզինի և դիզելային վառելիքի համապատասխանաբար 2.2% և 7.8% գնանկում: Հուլիսին 2003թ. դեկտեմբերի համեմատ բենզինի և դիզելային վառելիքի գնաճը կազմել է համապատասխանաբար 14.6% և 3.3%:

*Ծառայությունների սակագներ:* 2004թ. հուլիսին հունիսի համեմատ ծառայությունների ոլորտում գրանցված սակագների 0.4% նվազմանը հիմնականում նպաստել է տրանսպորտի՝ 2.1%, (կապված օդային տրանսպորտի սակագների 4.7% նվազման հետ), կապի՝ 1.2%, կրթության համակարգի՝ 0.7%, կենցաղային ծառայությունների՝ 0.5% սակագների նվազումը:

**Բնակչությանը մատուցված ծառայությունների հիմնական տեսակների սակագների փոփոխությունները**

*(%)*

| | 2004 թվականի | | | |
|---|---|---|---|---|
| | *հուլիսը* | | հունվար- հուլիսը 2003թ. հունվար-հուլիսի նկատմամբ | հուլիսը 2002թ. նկատմամբ |
| | 2004թ. հունիսի նկատմամբ | 2003թ. դեկտեմբերի նկատմամբ | | |
| *Ծառայություններ, ընդամենը* | 99.6 | 101.0 | 101.9 | 103.6 |
| *այդ թվում.* | | | | |
| կենցաղային | 99.5 | 98.3 | 98.7 | 97.7 |
| բնակարանային-կոմունալ | 100.0 | 103.1 | 102.0 | 103.1 |
| բուժսպասարկման | 100.8 | 98.9 | 99.5 | 99.5 |
| տրանսպորտի | 97.9 | 97.9 | 103.6 | 105.3 |
| կապի | 98.8 | 99.6 | 102.7 | 108.5 |
| մշակույթի | 100.2 | 109.8 | 129.8 | 137.4 |
| կրթության համակարգի | 99.3 | 100.4 | 98.7 | 101.1 |
| հանգստի կազմակերպման | 101.5 | 104.7 | 102.5 | 105.7 |
| հանրային սննդի | 102.5 | 106.4 | 104.3 | 111.4 |
| իրավական և բանկային | 100.0 | 100.2 | 100.0 | 100.0 |

*Սպառողական գների և ծառայությունների սակագների տարածքային առանձնահատկությունները:* 2004թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում դիտարկված բոլոր քաղաքներում սպառողական գները նվազել են 4.0-1.5% (գնանկման ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Կապանում): Մայրաքաղաքում արձանագրվել է սպառողական գների 2.3% նվազում:

**Հանրապետության հետազոտված բնակավայրերում կարևորագույն պարենային ապրանքների միջին գները 2004թ. հուլիսի 30-ի դրությամբ**

*(դրամ՝ կգ-ի համար)*

| | Միս տավարի | Պանիր | Կարագ | Բուսական յուղ, լիտր | Ձու, տասնյակի համար | Շաքարավազ | Կարտոֆիլ | Գլուխ սոխ | Կաղամբ | Խնձոր |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| *ՀՀ, միջինը* | 1417 | 1267 | 1482 | 684 | 470 | 251 | 95 | 200 | 141 | 437 |
| *այդ թվում.* | | | | | | | | | | |
| Երևան | 1450 | 1279 | 1451 | 682 | 475 | 251 | 90 | 200 | 150 | 438 |
| Գյումրի | 1383 | 1283 | 1530 | 683 | 438 | 268 | 101 | 222 | 100 | 442 |
| Վանաձոր | 1380 | 1200 | 1488 | 662 | 498 | 238 | 101 | 185 | 128 | 405 |
| Վաղարշապատ | 1450 | 1150 | 1420 | 670 | 475 | 245 | 90 | 200 | 150 | 400 |
| Թալին | 1450 | 1200 | 1550 | 750 | 400 | 255 | 90 | 180 | 130 | 400 |
| Դիլիջան | 1400 | 1250 | 1500 | 700 | 450 | 255 | 100 | 200 | 125 | 500 |
| Հրազդան,Չարենցավան | 1400 | 1300 | 1500 | 670 | 445 | 252 | 100 | 190 | 115 | 400 |
| Եղեգնաձոր | 1350 | 1300 | 1600 | 700 | 500 | 250 | 100 | 225 | 125 | 175 |
| Մարտունի | 1200 | 1300 | 1650 | 730 | 500 | 250 | 125 | 200 | 150 | 500 |
| Կապան | 1260 | 1300 | 1640 | 692 | 450 | 260 | 120 | 230 | 150 | 600 |
| Արտաշատ | 1400 | 1173 | 1600 | 689 | 414 | 250 | 100 | 220 | 100 | 400 |

Վերը նշված պարենային ապրանքների ընդհանուր արժեքը (յուրաքանչյուրից 1կգ-ի, ձվի՝ տասնյակի և բուսական յուղի՝ 1 լիտրի հաշվարկով) 2004թ. հուլիսի 30-ի դրությամբ հանրապետությունում միջին հաշվով կազմել է 6444 դրամ (ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է ք. Կապանում՝ 6702 դրամ, իսկ ամենացածրը՝ ք.Վաղարշապատում՝ 6250 դրամ), ինչը 12.6% գերազանցել է նույնանուն ապրանքատեսակների 2003թ. հուլիսի 30-ին արձանագրված ընդհանուր արժեքը (5725 դրամ):

2004թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետության դիտարկված բոլոր քաղաքներում գրանցվել է ոչ պարենային ապրանքների 1.0-0.1% գնանկում, ընդ որում համեմատաբար բարձր ցուցանիշ գրանցվել է մայրաքաղաքում:

2004թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետության դիտարկված 5 քաղաքներում գրանցվել է ծառայությունների սակագների 0.7-0.1% նվազում, 4-ում՝ 0.2-0.6% հավելաճ, իսկ ք. Կապանում պահպանվել է սակագների հունիսին գրանցված մակարդակը:

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսը 2004թ. հուլիսին 2003թ. դեկտեմբերի համեմատ, ըստ դիտարկված քաղաքների և ապրանքախմբերի**

*(%)*

| | Սպառողական գների ինդեքսը | *այդ թվում՝* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | սպառողական ապրանքների | *դրանցից՝* | | | ծառայությունների |
| | | | պարենային ապրանքների | ոգելից խմիչք և ծխախոտ | ոչ պարենային ապրանքների | |
| *ՀՀ, ընդամենը* | 101.9 | 102.1 | 103.0 | 98.6 | 99.7 | 101.0 |
| *այդ թվում.* | | | | | | |
| Երևան | 101.6 | 101.9 | 102.9 | 98.9 | 99.2 | 100.1 |
| Գյումրի | 102.7 | 102.8 | 104.1 | 99.0 | 99.1 | 102.3 |
| Վանաձոր | 101.8 | 101.5 | 102.3 | 96.2 | 100.6 | 103.2 |
| Վաղարշապատ | 103.0 | 103.2 | 103.8 | 100.2 | 101.8 | 102.0 |
| Թալին | 100.7 | 99.7 | 99.7 | 100.9 | 99.5 | 105.1 |
| Դիլիջան | 102.5 | 103.0 | 104.0 | 98.7 | 100.9 | 100.1 |
| Հրազդան,Չարենցավան | 101.3 | 101.3 | 102.0 | 96.5 | 100.5 | 101.3 |
| Եղեգնաձոր | 102.8 | 102.7 | 104.0 | 99.9 | 98.5 | 102.8 |
| Սարտունի | 104.7 | 105.4 | 107.2 | 100.4 | 100.4 | 101.5 |
| Կապան | 101.0 | 100.7 | 101.1 | 93.9 | 102.1 | 102.3 |

**Սպառողական ապրանքների գների և բնակչությանը մատուցված ծառայությունների սակագների ինդեքսները 2004թ. Արտաշատ[1] քաղաքում**

*(նախորդ ամսվա նկատմամբ, %)*

| | Սպառողական գների ինդեքսը | *այդ թվում՝* | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | սպառողական ապրանքների | *դրանցից՝* | | | ծառայությունների |
| | | | պարենային ապրանքների | ոգելից խմիչքի և ծխախոտի | ոչ պարենային ապրանքների | |
| Մարտ | 100.4 | 100.2 | 100.3 | 100.0 | 99.9 | 101.1 |
| Ապրիլ | 102.1 | 102.1 | 102.6 | 100.3 | 101.1 | 102.0 |
| Մայիս | 101.9 | 102.2 | 103.0 | 100.4 | 100.0 | 100.6 |
| Հունիս | 99.5 | 99.4 | 99.1 | 98.4 | 100.9 | 100.1 |
| Հուլիս | 97.7 | 97.4 | 97.0 | 95.0 | 99.7 | 99.2 |

***Արդյունաբերողների արտադրանքի գների ինդեքսը:*** 2004թ. հուլիսին 2003թ. դեկտեմբերի համեմատ հանրապետությունում գրանցվել է արդյունաբերական ոլորտի կազմակերպությունների թողարկած արտադրանքի 8.5% գնաճ, ինչը ցածր է նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համապատասխան ցուցանիշից 7.7 տոկոսային կետով(16.2%):

[1] *2004թ. փետրվարից սկսած գների դիտարկումը կատարվում է նաև Արարատի մարզում (Արտաշատ քաղաքում):*

Արդյունաբերողների արտադրանքի գների փոփոխությունները
ըստ արդյունաբերության ճյուղերի

(%)

| | 2004 թվականի | | | |
|---|---|---|---|---|
| | հուլիսը | | | հուլիսը 2002թ. նկատմամբ |
| | 2004թ. հունիսի նկատմամբ | 2003թ. հուլիսի նկատմամբ | հունվար-հուլիսը 2003թ. հունվար-հուլիսի նկատմամբ | |
| Ամբողջ արդյունաբերությունը | 96.7 | 116.0 | 121.5 | 136.7 |
| *այդ թվում՝* | | | | |
| էլեկտրաէներգետիկա | 99.2 | 99.0 | 99.0 | 97.4 |
| գունավոր մետալուրգիա | 100.0 | 147.2 | 174.5 | 241.2 |
| քիմիական, նավթաքիմիական արդյունաբերություն | 99.3 | 92.9 | 104.5 | 126.0 |
| մեքենաշինություն | 99.7 | 83.3 | 78.5 | 97.3 |
| այլ արդյունաբերական արտադրություն(ոսկերչական արդյունաբերություն) | 84.0 | 140.0 | 130.7 | 112.5 |
| անտառային, փայտամշակման, թղթի-ցելյուլոզի արդյունաբերություն | 96.0 | 89.1 | 95.2 | 91.1 |
| շինանյութերի արդյունաբերություն | 92.8 | 89.2 | 81.4 | 109.5 |
| թեթև արդյունաբերություն | 99.8 | 80.5 | 84.7 | 105.2 |
| սննդի (ներառյալ ալյուրի ու համակց - ված կերերի) արդյունաբերություն | 95.6 | 110.7 | 122.2 | 128.4 |
| պոլիգրաֆիական արդյունաբերություն | 74.7 | 131.9 | 134.1 | 111.7 |

*Բեռնափոխադրումների սակագների ինդեքսը:* 2004թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է բեռնափոխադրումների սակագների 2.7% նվազում, ինչը հիմնականում պայմանավորվել է օդային (7.6%), ավտոմոբիլային (3.4%) և երկաթուղային (2.6%) տրանսպորտով բեռնափոխադրումների սակագների նվազումով: Խողովակաշարային տրանսպորտով բեռնափոխադրումների սակագները նշված ժամանակահատվածում նվազել են 1.9%:

2004թ. հուլիսին 2003թ. հուլիսի համեմատ բեռնափոխադրումների սակագների ինդեքսը կազմել է 99.3%, այդ թվում երկաթուղային տրանսպորտով՝ 91.4%, ավտոմոբիլայինով՝ 104.3%, օդայինով՝ 84.8%, խողովակաշարային տրանսպորտով՝ 109.4%, իսկ հունվար-հուլիսին 2003թ. հունվար-հուլիսի համեմատ՝ համապատասխանաբար 100.6%, 94.7, 102.8, 91.4 և 107.9%:

*Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման և գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը:* 2004թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում գրանցվել է գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների 9.4% նվազում, ինչը իրացման բոլոր ուղղություններով գյուղատնտեսական մթերքի իրացման 10.4-1.3% գնանկման արդյունք է:

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման միջին գները
ՀՀ-ում 1999-2004թթ. հուլիսին

(դրամով)

| | Չափի միավորը | *1999* | *2000* | *2001* | *2002* | *2003* | *2004* |
|---|---|---|---|---|---|---|---|
| Ցորեն | կգ | 96 | 83 | 87 | 78 | 91 | 118 |
| Գարի | - ,,- | 91 | 65 | 71 | 75 | 96 | 104 |
| Կարտոֆիլ | - ,,- | 91 | 47 | 88 | 65 | 72 | 56 |
| Կաղամբ | - ,,- | 36 | 28 | 74 | 56 | 63 | 78 |
| Գազար | - ,,- | 55 | 62 | 109 | 126 | 112 | . . . |
| Գլուխ սոխ | - ,,- | 89 | 112 | 81 | … | 120 | 160 |
| Խնձոր | - ,,- | 92 | 75 | 97 | 303 | 149 | 201 |
| Մեղր | - ,,- | 2944 | 2577 | 3000 | 2885 | 2519 | 2699 |
| Միս՝ տավարի | - ,,- | 839 | 809 | 852 | 881 | 975 | 1126 |
| ոչխարի | - ,,- | 871 | 786 | 908 | 944 | 954 | 1129 |
| խոզի | - ,,- | 905 | 1004 | 1145 | 948 | 1054 | 1403 |
| Կաթ | լ | 100 | 93 | 92 | 90 | 94 | 94 |
| Մածուն | - ,,- | 170 | 162 | 165 | 169 | 169 | 170 |
| Պանիր (յուղոտ) | կգ | 839 | 687 | 740 | 747 | 745 | 816 |
| Ձու | հատ | 41 | 35 | 35 | 38 | 39 | 42 |
| Միամյա խոտեր | կգ | 20 | 17 | 18 | 19 | 31 | 25 |
| Բազմամյա խոտեր | - ,,- | 25 | 19 | 21 | 20 | 27 | 30 |

... _ դիտարկված տնտեսություններում իրացում (վաճառք) չի կատարվել

Գյուղատնտեսական մթերք արտադրողների իրացման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի

(%)

| | *2004 թվականի* | | | |
|---|---|---|---|---|
| | *հուլիսը* | | | հունվար- հուլիսը 2003թ. հունվար-հուլիսի նկատմամբ |
| | 2004թ. հունիսի նկատմամբ | 2003թ. հուլիսի նկատմամբ | 2003թ. դեկտեմբերի նկատմամբ | |
| ՀՀ, *ընդամենը* | 90.6 | 121.0 | 96.6 | 108.1 |
| *այդ թվում՝* | | | | |
| Արագածոտն | 100.3 | 106.4 | 99.4 | 103.8 |
| Արարատ | 91.0 | 123.4 | 88.1 | 115.3 |
| Արմավիր | 82.9 | 121.2 | 93.0 | 112.3 |
| Գեղարքունիք | 96.6 | 111.6 | 97.8 | 91.8 |
| Լոռի | 103.0 | 115.1 | 96.7 | 116.1 |
| Կոտայք | 96.1 | 119.6 | 107.0 | 110.1 |
| Շիրակ | 100.4 | 113.3 | 99.6 | 112.6 |
| Սյունիք | 99.7 | 113.6 | 96.8 | 104.6 |
| Վայոց ձոր | 99.9 | 117.0 | 109.5 | 106.8 |
| Տավուշ | 100.7 | 117.0 | 112.0 | 121.2 |

2004թ. հուլիսին հունիսի համեմատ հանրապետությունում գրանցված գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման 3.3% գնաճը հիմնականում պայմանավորվել է պարարտանյութերի (14.5%), բույսերի պաշտպանության միջոցների (11.8%), անասունների (3.8%), շինանյութերի (3.3%) գնման գնաճով, ինչպես նաև գյուղատնտեսական վճարովի ծառայությունների սակագների (23.7%) հավելաճով: Նշված ժամանակահատվածում էներգիայի և քսայուղերի գներն աճել են 1.7%, իսկ մեքենասարքավորումների և պահեստամասերի, սերմացուների և տնկիների, անասնակերի, գյուղատնտեսական մանր գործիքների ապրանքախմբերում գրանցվել է 11.1-0.3% գնանկում:

Գյուղատնտեսության արտադրության միջոցների գնման գների ինդեքսը ՀՀ-ում, ըստ մարզերի

(% )

| | *2004 թվականի* | | | |
|---|---|---|---|---|
| | *հուլիսը* | | | հունվար- հուլիսը 2003թ. հունվար-հուլիսի նկատմամբ |
| | 2004թ. հունիսի նկատմամբ | 2003թ. հուլիսի նկատմամբ | 2003թ. դեկտեմբերի նկատմամբ | |
| ՀՀ, *ընդամենը* | 103.3 | 112.4 | 107.6 | 106.5 |
| *այդ թվում՝* | | | | |
| Արագածոտն | 99.0 | 108.5 | 119.7 | 107.1 |
| Արարատ | 96.4 | 117.9 | 104.0 | 108.2 |
| Արմավիր | 99.5 | 115.6 | 104.6 | 107.3 |
| Գեղարքունիք | 99.1 | 108.5 | 104.0 | 107.6 |
| Լոռի | 100.9 | 110.7 | 105.5 | 106.5 |
| Կոտայք | 101.3 | 88.7 | 103.7 | 101.4 |
| Շիրակ | 100.3 | 111.4 | 105.4 | 109.7 |
| Սյունիք | 95.6 | 109.4 | 103.0 | 101.5 |
| Վայոց ձոր | 103.8 | 111.2 | 109.4 | 107.6 |
| Տավուշ | 97.6 | 113.1 | 107.3 | 107.0 |

### *Արտաքին առևտրի գների ինդեքսները*

Ներմուծման և արտահանման միջին գների (միջին արժեքի) ինդեքսները ՀՀ արտաքին առևտրում (առանց մարդասիրական օգնության) 2004թ. I և II եռամսյակներում

(%)

| | Ընդամենը, ըստ երկրների | | *այդ թվում՝* | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | ըստ ԱՊՀ երկրների | | ըստ ոչ ԱՊՀ երկրների | |
| | I | II | I | II | I | II |
| | *նախորդ տարվա նկատմամբ,%* | | | | | |
| Ներմուծում | 103.8 | 106.3 | 106.3 | 106.6 | 102.8 | 106.2 |
| Արտահանում | 102.2 | 100.2 | 99.8 | 114.8 | 102.8 | 96.8 |
| | *նախորդ եռամսյակի նկատմամբ,%* | | | | | |
| Ներմուծում | 103.8 | 102.4 | 106.3 | 100.3 | 102.8 | 103.3 |
| Արտահանում | 102.2 | 98.0 | 99.8 | 115.0 | 102.8 | 94.2 |